

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի օրերը Հայաստանում

Օրերս Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) 60-ամյակի և ինստիտուտին Հայաստանի անդամակցության 25-ամյակի կապակցությամբ Հայաստան էին ժամանել ճանաչված գիտնականներ, գիտության ոլորտի պաշտոնատար անձինք՝ ինստիտուտի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վիկտոր Մատվենի գլխավորությամբ:

Հյուրերին իր նստավայրում ընդունել է Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը ողջունել է անվանի գիտնականներին և նշել, որ նմանատիպ հանդիպումները լավ հնարավորություն են գիտական հանրության ներկայացուցիչների և, հատկապես, երիտասարդ գիտնականների համար, ինչպես նաև՝ առիթ են անմիջական շփվելու գիտության ասպարեզում բարձր նվաճումների հասած անհատականությունների հետ: Նախագահի համոզմամբ, նման միջոցառումները ոչ միայն գիտական, այլև տարբեր մշակույթներ և ավանդույթներ կրող, տարբեր գիտական դպրոցներ ներկայացնող անձանց միջև երկխոսության հնարավորություն է՝ միտված համագործակցության նոր ուղղությունների նախանշմանն ու ոլորտի արդիական խնդիրների քննարկմանը: Հանրապետության Նախագահը կարևորել է միջազգային գիտական ծրագրերին հայ գիտնականների ակտիվ մասնակցությունը: Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Հայաստանը հնարավորության սահմաններում համակողմանիորեն խթանում է գիտության զարգացումը և խրախուսում է Հայաստանի տնտեսության մեջ գիտելիքահենք ճյուղերի զարգացումը:

Հայաստանում Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի օրերի մեկնարկը Մատենադարանում էր, որտեղ հանդիսավոր պայմաններում ինստիտուտի 60-ամյակի կապակցությամբ գիտնականներին հանձնվեցին պարգևներ: Հայաստանի և Ռուսաստանի միջև գիտական կապերի ամրապնդման, միջազգային գիտակրթական տարածք Հայաստանի ինտեգրման, Հայաստանում բարձրագույն որակավորմամբ կադրերի պատրաստման բնագավառներում ներդրած ավանդի համար՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե հուշամեդալով պարգևատրվեցին ՄՀՄԻ փոխտնօրեններ Միխայիլ Իտկիսն ու Ռիխարդ Լեդնիցկին: Միջազգային գիտական համագործակցության զարգացման գործընթացում ունեցած ավանդի, օտարերկրյա

պետությունների հետ համագործակցությանը նպաստող գործունեության և ՄՀՄԻ-ի ու Հայաստանի գիտնականների համագործակցության ուղղությամբ բազմամյա ու արդյունավետ աշխատանքի համար՝ Գիտության պետական կոմիտեի ոսկե մեդալով պարգևատրվեցին ՄՀՄԻ փոխտնօրեն, ՌԳԱ թղթակից անդամ Գրիգորի Տրուբնիկովն ու ՄՀՄԻ Ն. Բոգոլյուբովի անվան տեսական ֆիզիկայի լաբորատորիայի տնօրեն, պրոֆեսոր Վիկտոր Վորոնովը, իսկ պատվոգրով՝ ՄՀՄԻ Հայաստանի ազգային խմբի ղեկավար Էդիկ Հայրյանը: Միացյալ ինստիտուտի պատվիրակությունը ևս հուշամեդալներ ու պատվոգրեր հանձնեց Հայաստանի ու ՄՀՄԻ-ի համագործակցության մեջ անձնական մեծ ներդրում ունեցող հայ գիտնականներին:

Հանդիպումներ եղան նաև Երևանի քաղաքապետարանում, Երևանի պետական համալսարանում, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում: Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա. Սիմոնյանը Վիկտոր Մատվենին հանձնեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման հավաստագիր ու ԵՊՀ ոսկե մեդալ՝ գիտության զարգացման և ՌԴ-ի ու ՀՀ-ի միջև գիտական կապերի ամրապնդման համար:

Հյուրերն այցելեցին նաև «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ, Գառնիի երկրաֆիզիկական դիտարան, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա:

Հայաստանը ՄՀՄԻ անդամ-պետություն

Ժամանակակից գիտության առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ հնարավոր է լուծել միայն խոշորամասշտաբ միջպետական գիտական համագործակցությունների շրջանակներում. դրանք պահանջում են մեծ ֆինանսական ու մարդկային ռեսուրսների կենտրոնացում, ինչը չեն կարող իրենց թույլ տալ նույնիսկ տնտեսապես ամենահզոր երկրները:

Հայաստանը դեռևս 1956 թ. մարտի 26-ից՝ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ստեղծման պահից, լինելով ԽՍՀՄ կազմում, ընդգրկվել է ինստիտուտի աշխատանքներում: Հետագայում, արդեն որպես անկախ պետություն, 1992 թ.-ին Հայաստանի Հանրապետությունը դարձել է ինստիտուտի անդամ-պետություն:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը ստեղծվել է 1956թ. մարտի 26-ին 11 հիմնադիր երկրների կառավարությունների կողմից ստորագրված համաձայնագրի հիման վրա՝ համախմբելու իրենց գիտական և նյութական ներուժը՝ մատերիայի հիմնարար հատկությունները հետազոտելու նպատակով:

1957 թ. փետրվարի 1-ին Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը գրանցվել է ՄԱԿ-ի կողմից:

Ինստիտուտը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում՝ Մոսկվայից 120 կմ հեռավորության վրա՝ Դուբնա քաղաքում:

Այսօր Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը համաշխարհային ճանաչում ունեցող գիտական կենտրոն է, որտեղ հիմնարար հետազոտությունները (տեսական և փորձարարական) հաջողությամբ համադրվում են նորագույն տեխնոլոգիաների մշակման, ներդրման և համալսարանական կրթության հետ:

Համաշխարհային գիտական հասարակության մեջ ՄՀՄԻ-ի վարկանիշը շատ բարձր է: ՄՀՄԻ-ի անդամ է 18 երկիր. բարձրագույն ղեկավար մարմինը 18 անդամ-երկրների կառավարությունների լիազոր ներկայացուցիչներից կազմված կոմիտեն է:

ՄՀՄԻ-ի տեսական և փորձարարական հետազոտությունների հիմնական ուղղություններն են տարրական մասնիկների ֆիզիկան, միջուկային ֆիզիկան և կոնդենսացված միջավայրերի ֆիզիկան:

Ինստիտուտի կազմում գործում է 7 լաբորատորիա: Ինստիտուտում աշխատում է շուրջ 4500 մարդ, այդ թվում՝ ավելի քան 1200 գիտական աշխատող (ակադեմիկաների իսկական և թղթակից անդամներ, գիտության ավելի քան 260 դոկտոր և 570 թեկնածու): Ինստիտուտը կապեր ունի աշխարհի 62 երկրների մոտ 800 գիտական կենտրոնների և համալսարանների հետ: ՄՀՄԻ գիտական ծրագրի իրականացմանը մասնակցում են ԱՊՀ 10 երկրների ավելի քան 260 գիտական կենտրոն, համալսարան և ձեռնարկություն:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը փոխշահավետ կապեր է պահպանում ՄԱԳԱՏԵ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպական ֆիզիկոսների հանրության՝ Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի հետ: Ամեն տարի ՄՀՄԻ-ի հետ համագործակցող կազմակերպություններից Դուբնա է այցելում ավելի քան 1000 գիտնական: Չարգացող երկրների ֆիզիկոսներին ինստիտուտը տրամադրում է կրթաթոշակներ: Միացյալ ինստիտուտի գիտնականները մշտապես մասնակցում են միջազգային ու ազգային գիտական կոնֆերանսների: Իր հերթին ինստիտուտը տարեկան կազմակերպում է մոտ 10 խոշոր կոնֆերանս, ավելի քան 30 միջազգային խորհրդակցություն, ինչպես նաև, արդեն ավանդական դարձած, երիտասարդ գիտնականների դպրոցներ:

ՄՀՄԻ-ին է պատկանում միջուկային ֆիզիկայի բնագավառում կատարված ավելի քան 40 հայտնագործություն: Ժամանակակից ֆիզիկայի և քիմիայի բնագավառում

ինստիտուտի ունեցած մեծ ներդրման համար, ի նշան երախտագիտության, Ընդհանուր և կիրառական քիմիայի միջազգային միության (IUPAC) որոշմամբ Մենդելևի պարբերական աղյուսակի 105-րդ տարրն անվանվել է Dubnium (Db):

Ինստիտուտի վերջին ձեռքբերումներից է գերծանր տարրերի հետազոտման ծրագիրը: Դուբնայի գիտնականների շնորհիվ՝ ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանի ղեկավարությամբ, առաջին անգամ սինթեզվել են նոր գերծանր քիմիական տարրեր՝ որոնք համալրել են Մենդելևի պարբերական աղյուսակի 113-ից 118-րդ տեղերը: ***Ի դեպ, 118-րդ տարրն անվանվելու է Oganesson (Og)՝ ինստիտուտի Գ. Ֆյոդովի անվան միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, հայ մեծ գիտնական Յուրի Յուլակի Հովհաննիսյանի պատվին:***

Այս տարիների ընթացքում Հայաստանի գիտական կենտրոնների, առաջին հերթին՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հետ ձևավորվել են բազմակողմանի հաստատուն զարգացած կապեր:

Հայաստանի մասնագետները մասնակցել և այսօր էլ մասնակցում են ՄՀՄԻ կողմից իրականացվող բազմաթիվ խոշոր նախագծերի: Այսօր Հայաստանի Հանրապետության գիտական կենտրոններից բազմաթիվ խմբեր են ընդգրկված ինստիտուտի ծրագրերում. Դուբնայում այսօր ունենք աշխատող 12 գիտնական և մասնագետ:

Հայազգի գիտնականները տարբեր ժամանակներում ընդգրկվել են նաև ինստիտուտի վարչական կազմում: Հայ ֆիզիկոս-տեսաբան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան, ՌԳԱ թղթակից անդամ Ալեքսեյ Սիսակյանը 1979-1989 թթ. եղել է ինստիտուտի գլխավոր գիտական քարտուղար, 1989-2005 թթ.՝ փոխտնօրեն, 2006-2010 թթ.՝ տնօրեն, միաժամանակ՝ 1985 թվականից տեսական ֆիզիկայի լաբորատորիայի տնօրեն:

Հայ մեծ գիտնական, ֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս Յուրի Յուլակի Հովհաննիսյանը 1976-1989 թթ. եղել է ՄՀՄԻ միջուկային ռեակցիաների լաբորատորիայի փոխտնօրեն, 1989-1997 թթ.՝ տնօրեն, միաժամանակ 1971 թ.՝ նույն լաբորատորիայի ծանր միջուկների հետազոտման բաժնի պետ, 1997 թ-ից առ այսօր՝ լաբորատորիայի գիտական ղեկավար:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ հայ գիտնականների և ինժեներների մասնակցությամբ համատեղ աշխատանքները հնարավորություն են

տալիս մեր երկրի համար հետաքրքրությունն ներկայացնող ոլորտներում իրականացնել այն հիմնարար և կիրառական հետազոտությունները, որոնք տարբեր պատճառներով հնարավոր չէ կատարել երկրի ներսում: Հայաստանի մասնագետները մասնակցել և այսօր էլ մասնակցում են ՄՀՄԻ կողմից իրականացվող բազմաթիվ խոշոր նախագծերի:

ՄՀՄԻ-ին մեր մասնակցությունը շատ լավ հիմքեր է տալիս համաշխարհային գիտական համագործակցության համար: Այն լայն հնարավորություններ է տալիս ուղիղ կապեր հաստատել արտասահմանյան երկրների հետ, ինչպես նաև՝ Միացյալ ինստիտուտի միջոցով Հայաստանի գիտական կենտրոնները զարգացրել են գիտատեխնիկական համագործակցություն համաշխարհային առաջատար ատոմային կենտրոնների հետ, ինչպիսիք են CERN (Swiss), DESY(Germany), JLAB (USA), FLAB (USA) և այլն:

Բացի այդ ՄՀՄԻ -ն մեծ դեր է ունեցել և ունի տեսական ֆիզիկայի, բարձր էներգիաների ֆիզիկայի և ատոմային միջուկի ֆիզիկայի բնագավառում Հայաստանից գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում: 1995-2015 թթ. ընթացքում ՄՀՄԻ-ում Հայաստանի մասնագետների կողմից պաշտպանվել է 14 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություն, մասնագիտական պատրաստվածություն են անցել 100-ից ավել մագիստրոսներ, ասպիրանտներ և ստաժորներ:

Ամփոփելով հարկ է նշել, որ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ համագործակցությունը խիստ կարևոր և անհրաժեշտ է Հայաստանում միջուկային տեխնոլոգիաների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման, միջազգային հետազոտություններում հայ գիտնականների ինտեգրման և այդ բնագավառում կադրերի պատրաստման համար: Այդ համագործակցությունը նպաստում է ձեռնարկություններում նոր բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, համաշխարհային շուկայում դրանց դերի բարձրացմանը: Եվ Հայաստանը շահագրգռված է այս ուղղությամբ աշխատանքները ինտենսիվ կերպով շարունակելու և զարգացնելու գործում:

Գոհար Մելիքսեյան
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ